

# ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

## ՎԱՆՈ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆեսոր

Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ

## ՆՈՐ ԱՆՏԻՊ ՏԱՂ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑՈՒՑ<sup>1\*</sup>

**Բանալի բառեր-** թվուրանցիագիտություն, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի հմր. 1002 ձեռագիր, անտիպ տաղ, աղերսանք:

### Նախաբան

Սույն հոդվածի **խնդրո առարկան** Վիեննայի Մխիթարյան մատենադարանի հմր. 1002, Մաշտոցյան Մատենադարանի հմր. 2079, Վենետիկի Մխիթարյան միաբանության հմր. 1250 ձեռագրերում պահպանված «Չքեզ ունիմ յոյս ապաւէն» սկսվածքով տաղն է: Հոդվածի **նպատակն** է հրապարակել Հովհաննես Թվուրանցու ևորահայտ անտիպ տաղը: Ուսումնասիրության **արդիականությունը** պայմանավորված է մեզ հասած ձեռագրերի լուսապատճենների զուգադրական քննությամբ անտիպ տաղի բնագիրը կազմելու, ծանոթագրելու և գիտական շրջանառության մեջ դնելու հանգամանքով: Հոդվածում կիրառել ենք **հերմենևտիկայի** մասնագիտական մեթոդը՝ ձեռագրագիտական և բնագրագիտական սկզբունքների համադրմամբ: Հոդվածի **գիտական նորույթը** Հովհաննես Թվուրանցու ևորահայտ անտիպ տաղի գիտական բնագրի հրապարակումն ու մեկնաբանումն է:

### Անտիպ տաղի բնագրի պատրաստում

Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի հմր. 1002 ձեռագրի 187ա-187բ թերթերում (ժամանակը՝ 1654թ.), Մաշտոցյան Մատենադարանի հմր. 2079 ձեռագրի 398բ-399ա թերթերում (ժամանակը՝ 1622թ.-ից հետո), Վենետիկի Մխիթարյան միաբանության հմր. 1250 ձեռագրի 378ա-378բ թերթերում (ժամանակը՝ 1620-1624թթ.), պահպանվել է հս. Հովհաննես Թվուրանցու անունով խրատական բովանդակությամբ մի անտիպ տաղ, որը, թեև նկարագրված է ձեռագրացուցակներում, բայց միևնույն ժամանակահատվածում է եղել թվուրանցիագիտությանը:

Այս ստեղծագործության մասին որևէ բան չեն հիշատակում Թվուրանցու 1 \* Ընդունվել է տպագրության 15.06. 2022 թ.

րանցու տաղերի հրապարակողներ Ղևոնդ Ալիշանը<sup>1</sup>, Գարեգին Սրվանձտյանցը<sup>2</sup>, Արիստակես վարդապետ Տևկանցը<sup>3</sup>, Թլկուրանցու տաղերի առաջին ժողովածուն կազմող Կարապետ Կոստանյանցը<sup>4</sup>, Ներսես Ակիկյանը<sup>5</sup>, Արշակ Զոպանյանը<sup>6</sup>, Երվանդ Շահագիզը<sup>7</sup>, Ղևոնդ Հովհաննիսյանը<sup>8</sup>, Հարություն Սուրխաթյանը<sup>9</sup>, Հարություն Քյուրտյանը<sup>10</sup>, Բաբկեն Կյուլենտերյանը<sup>11</sup>, Ասատուր Մնացականյանը<sup>12</sup>, Նորայր արքեպիսկոպոս Շովականը<sup>13</sup>, Լևոն Մինասյանը<sup>14</sup> և տողերիս հեղինակը<sup>15</sup>:

Այս տաղի մասին առաջաբանում հիշատակություն կատարել է Էմ.

1 Տե՛ս «Բազմավեպ», 1859, թիվ 12, նաև **Ղ. Ալիշան**, Սիսուան, 1885, նաև **Ղ. Ալիշան**, Հայապատում, 1901, նաև **Ղ. Ալիշան**, Հուշիկը հայրենեաց հայոց, հտ. Բ, 1870:

2 Տե՛ս Տե՛ս **Գ. Սրուանձտեանց**, Մանանայ, 1876:

3 Տե՛ս **Ա. Տևկանց**, Հայերգ, մեղեդիք, տաղք եւ երգք, Թիֆլիս, 1882:

4 Տե՛ս **Կ. Կոստանեանց**, Յովհաննես Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892, նաև **Կ. Կոստանեանց**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ, Ա պրակ, Թիֆլիս, 1892, նաև **Կ. Կոստանեանց**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ, Գ պրակ, Թիֆլիս, 1896, նաև **Կ. Կոստանեանց**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր եւ ոտանաւորներ, Վաղարշապատ, 1903, Դ պրակ:

5 Տե՛ս «Արեգ», 1924, Վիեննա, թիվ 8, թիվ 9, թիվ 11, թիվ 12:

6 Տե՛ս «Անահիտ», 1903, Փարիզ, թիվ 9, թիվ 12, նաև «Անահիտ», 1930, թիվ 5, նաև «Անահիտ», Փարիզ, 1931, թիվ 5-6, նաև **Ա. Զոպանեան**, Հայ էջեր, Փարիզ, 1912, նաև **Ա. Զոպանեան Ա.**, Թլկուրանցին ինչպէս որ է, «Հայաստանի կոչնակ», 1929, թիվ 1:

7 Տե՛ս **Ե. Շահագիզ**, Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903:

8 Տե՛ս **Ղ. Յովհաննեան**, Միջնադարեան ազգային տաղաչափութիւն ռամկախառն, Վիեննա, 1911:

9 Տե՛ս **Հ. Սուրխաթյան**, Գրական գոհարներ, հտ. Ա, Թիֆլիս, 1922:

10 Տե՛ս **Յ. Քիւրտեան**, Յովհաննես Թլկուրանցիի տաղերը, «Հայրենիք ամսագիր», 1935, թիվ 8, նաև **Յ. Քիւրտեան**, Յովհաննես Թլկուրանցիի քանի մը անտիպ եւ հազուագիւտ տաղերը, «Հայրենիք ամսագիր», 1935, թիվ 9, նաև **Յ. Քիւրտեան**, Յովհաննես Թլկուրանցիի տաղ «Վասն ստեղծման աշխարհի», «Բազմավեպ», 1938, թիվ 6-9, նաև **Յ. Քիւրտեան**, Միջնադարեան հայ տաղասացներ, «Բազմավեպ», 1939:

11 Տե՛ս **Բ. Կիւլենտերեան**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիպիաս, 1939:

12 Տե՛ս **Աս. Մնացականյան**, Անտիպ բանաստեղծություններ և վարիանտներ, «Գիտական նյութերի ժողովածու», թիվ 1, 1941, նաև **Աս. Մնացականյան**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956:

13 Տե՛ս **Յովհաննես Թլկուրանցի**, Տաղագիրք, աշխ. **Ն. Շովականի**, Երուսաղեմ, 1958, նաև «Սիոն», 1952, թիվ 5, նաև «Սիոն», 1952, թիվ 10, նաև «Սիոն», 1952, թիվ 11-12, նաև «Սիոն», 1953, թիվ 3-4, նաև «Սիոն», 1955, թիվ 9-10, նաև «Սիոն», 1956, թիվ 2-3, նաև «Սիոն», 1956, թիվ 5-6:

14 Տե՛ս **Լ. Մինասեան**, Մի քանի տաղ Յովհաննես Թլկուրանցուց, «Սիոն», 1967, թիվ 9-10, թիվ 11-12:

15 Տե՛ս **Վ. Եղիազարյան**, Երկու անտիպ տաղ Հովհաննես Թլկուրանցուց, «Էջմիածին», 1997 Ա, նաև **Հովհաննես Թլկուրանցի**, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ՝ **Վանո Եղիազարյանի**, Վանաձոր, 2004, 184 էջ:

Պիվազյանը՝ նշելով միայն Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրի համարն ու թերթերը, տաղի սկզբի ու վերջի տողերը<sup>1</sup>:

Թեև Թլկուրանցու տաղերի և գանձերի գիտական ժողովածու կազմել են Ն. Ծովականը, Էմ. Պիվազյանը և Վ. Եղիազարյանը, սակայն, ինչպես 1931թ. Արշակ Զոպանյանն է գրել, այսօր էլ, կարծես, «Թլկուրանցու գործերուն ամբողջական հրատարակություն մը դեռ չունինք, եւ ատիկա պակաս մըն է, որ պետք է լրացուի»<sup>2</sup>:

Եվ ահա, երբ կրկին ձեռնարկել ենք Թլկուրանցու տաղերի և գանձերի գիտական քննական բնագրերի նոր ժողովածուի պատրաստման գործը, հայտնաբերեցինք ևս մեկ անտիպ տաղ, որի մասին տեղեկությամբ հանդիպում ենք ձեռագրացուցակներում<sup>3</sup>:

Մաշտոցյան Մատենադարանից ձեռագրի լուսապատճենը ստանալուց հետո, դիմեցինք Վիեննայի Մխիթարյան միաբանության արքահայր Պողոս Գոճանյանին, և վերջինս սիրով մեզ ուղարկեց Վիեննայի Մատենադարանում պահվող ձեռագրի լուսապատճենը, ինչի համար հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Արդ, Մաշտոցյան Մատենադարանի հմր. 2079 և Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 1002 ձեռագրերի համեմատական քննությամբ կազմել ենք տաղի քննական բնագիրը:

Չքեզ ունիմ յոյս ապաւեն, ամենողորմ և կեցուցիչ,  
Կենդանացո՛ւ մեղօք մեռեալս, կենդանութեան մեր պարգևիչ:

Կատարիչ խնդրուածաց, լե՛ր և իմոցս կատարիչ,  
Մեղաւոր եմ, մեղաւոր, մեղաւորաց դու ես քաւիչ:

5 Հինգ զգայարանքս իմ պահպանեա՛, եզականացս պահպանիչ,  
Որ աւազակն չմտանէ, աւազակաց լե՛ր հալածիչ:

Քննող գաղտնեաց, տեսող գործոց, մոլորելոց դարձուցիչ,  
Թեպետ և մեղք իմ բազմացան շատ քան զաւագ և՛ զքար, և՛ զխիճ:

1 Տե՛ս **Հովհաննես Թլկուրանցի**, Տաղեր, աշխ. Էմ. Պիվազյանի, Ե., 1960, էջ 83:

2 «Անահիտ», Փարիզ, 1931, թիւ 5-6, էջ 2:

3 Տե՛ս Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հտ. 2, խմբագրութեամբ՝ **Գեորգ Տեր-Վարդանեանի**, Ե., 2012, էջ 1391, նաև Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ, կազմեց **Հ. Համազասպ Ոսկեան**, Վիեննա, 1963, էջ 595, նաև Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Է, յօրինեց **Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան**, Վենետիկ, 1996, էջ 307:

Տո՛ւր ինձ միայն զքեզ սիրել, որ զիուր սիրոյ ես բորբոքիչ,  
10 Ի յանցանաց տղմոյ լուայ, ամեն մեղաց ես լուացիչ:

Սպիտակացո՛ղ զխաւար հոգիս, որ սևացաւ քան զսև կճիճ,  
Բարերար բնութիւն բարի, վիրաց իմոց լե՛ր դարմանիչ:

Համբարձի զաչս իմ առ քեզ, Աստուած և՛ Հայր, և՛ Տէր Փրկիչ,  
Տո՛ւր ժամանակ ապաշխարել, գոչել առ քեզ և բառնալ ճիչ:

15 Լալ և՛ հայցել, և՛ պաղատիլ, որ արտասուքն դառնայ լիճ,  
Թեպետ և ժամս կարճացաւ, աւուրքս շատ դարձաւ ի քիչ:

Խել Ովանես Թովկուրանցի, երգըդ բարոյ է յորդորիչ,  
Այլ ի լերինքն կատարի, թէ ասելոյդ լինես լսիչ:

#### ՁԵՌԱԳՐԵՐ

A- ձեռ. հմր. 2079, թերթ 398բ-399ա:

B - Վիեննա Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռ.  
հմր.1002, թերթ 187ա-187բ:

C- Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռ.  
հմր. 1250, թերթ 378ա-378բ:

#### ԽՈՐԱԳԻՐ

A C Նորին Յովանիսի ողբ B Տաղ Յովանիսի ասացեալ  
ԲՆԱԳԻՐ

1 B ունիմք

2 A կենդանացոյ

4 B Մեղօք ի լի ես փխ Մեղաւոր եմ

5 B Չհինգ B սգայարանս B եղանակիչս փխ եգականացս B պահ-  
պանե փխ պահպանիչ

7 B մոլորելոցըս

8 B զքարն փխ և քար

9 B հուր B սիրո

10 A խանցանց B տըղմո B լուա A որ փխ ամեն

11 A սպիտակացոյ A զխօր փխ զխաւար

12 B վիմաց փխ վիրաց B լեր լեր փխ լեր

14 B կոչել փխ գոչել A ճիճ

15 B Լաց փխ Լալ B արտաստուօքըն

17 A Յովանես լցեալ մեղօք փխ Խեվ Ովանես Թուկուրանցի

Այս անտիպ տաղին Մաշտոցյան Մատենադարանի հմր. 2079 ձեռագրում նախորդում է Թկուրանցու «Զեզ հոգևոր խրատ մի տամ» սկսվածքով տաղը, և հաջորդում է նույնպես Թկուրանցու «Յորժամ կամեր» սկսվածքով վիպական տաղը: Այս տաղը խորագրված է «Նորին Յովանիսի ողբ», և չնայած որ տաղի վերջում չի հիշատակվում Թկուրանցու անունը, այլ պարզապես՝ Հովհաննես անունը՝ «Յովանես լցեալ մեղօք», անկասկած է, որ այն պատկանում է Թկուրանցու գրչին:

Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի հմր. 1250 ձեռագրում ևս այն Թկուրանցու տաղերի շարքում է՝ կրկին «Նորին Յովանիսի ողբ» խորագրով, հանգամանք, որ կասկածի չի ենթարկում մեր պնդումը, և հաստատում է տաղի՝ Թկուրանցու գրչին պատկանելը:

Մինչդեռ Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի հմր. 1002 ձեռագրում տաղը վերջանում է «Խեվ Ովանես Թուկուրանցի, երգըդ բարոյ է յորդորիչ» տողերով, ինչն անվերապահորեն հաստատում է, որ տաղի հեղինակը Խև Հովհաննես Թկուրանցին է:

### **Տաղի մեկնաբանում**

Միջնադարի հավատավոր այս բանաստեղծը, որքան էլ սիրո հանճարեղ երգիչ է, իր խրատական տաղերում հասել է հոգևոր ներդաշնության՝ ապավինելով Աստծուն, որին այս նորահայտ տաղում դիմում է տարաբնույթ փառաբանական վերադիրներով՝ «ամենողորմ և կեցուցիչ», «կենդանութեան մեր պարգևիչ», «կատարիչ խնդրուածաց», «մեղաւորաց քաւիչ», «եզականացս պահպանիչ», «քննող գաղտնեաց», «տեսող գործոց», «մոլորելոց դարձուցիչ», «գիւր սիրոյ բորբոքիչ», «բարերար բնութիւն բարի», իսկ ամենավերջում՝ «Աստուած և՛ Հայր, և՛ Տէր Փրկիչ»:

Որպես մեղավոր մի մարդ՝ բանաստեղծը դիմում է Աստծուն, որ կենդանացնի իրեն՝ որպես մեղքերի բեռից մեռածի, կատարի իր խնդրանքները, պահպանի իր հինգ զգայարանները, որ այնտեղ մուտք չգործեն ավազակները: Քանի որ բազմացել են իր մեղքերը՝ որպես «գաւազ և՛ զքար, և՛ գիւիճ», ուստի սիրով ու հույսով դիմում է առ Աստված՝ աղաչելով, որ մաքրի հանցանքների տիղմից՝ սպիտակեցնելով խավար հոգին, որն առավել սևացել է, քան սև կճուճը: Խնդրում է, որ դարմանի իր վերքերը, թույլ տա ապաշխարել՝ ապավինելով Աստծու ողորմածությանը,

լայով հայցի և պաղատի այնքան, որ իր արատասուլքը լիճ դառնա:

Ինչպես իր մյուս խրատական տաղերում, այս տաղում ևս իսկ բանաստեղծը ապավինում է աստվածահաճ բարությանը՝ որպես բարու սերմնացան, շաղ է տալիս իր երգերը հայոց քնարի հերկերում:

Խեղձ Ովանեսն Թուկուրանցի, երգըդ բարոյ է յորդորիչ,

Այլ ի լերինքն կատարի, թե ասելոյդ լինես լսիչ:

Մի վերջին դիտարկում: Թեև ձեռագրերում այն անվանվել է տաղ և ողբ, սակայն ժանրային առումով այն տաղի աղերսանք կոչվող ենթատեսակն է<sup>1</sup>:

### **Եզրակացություն**

Անտիպ այս տաղը պահպանվել է երեք ձեռագրերում՝ Մաշտոցյան Մատենադարանի հմր. 2079 ձեռագրի 398բ-399ա թերթերում, Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի հմր. 1002 ձեռագրի 187ա-187բ թերթերում և Վենետիկի Մխիթարյան միաբանության հմր. 1250 ձեռագրի 378ա-378բ թերթերում: Մաշտոցյան և Վենետիկյան ձեռագրերում տաղը գտնվում է Թլկուրանցու տաղերի հարևանությամբ՝ «Նորին Յովանիսի ողբ» խորագրով, որն ինքնին հաստատում է, որ տաղի հեղինակը Թլկուրանցին է, սակայն տաղի վերջում հեղինակի անունը հիշատակվում է անորոշ ձևով՝ «Յովանես լցեալ մեղօք», մինչդեռ Վիեննայի Մխիթարյան մատենադարանի ձեռագրում՝ տաղն ավարտվում է «Խեղձ Ովանեսն Թուկուրանցու» անվան հիշատակմամբ, որով անվիճելի է դառնում տաղի հեղինակային պատկանելությունը:

Աղերսանք համարվող այս տաղը հավատարիմ է Թլկուրանցու խոհախրատական տաղերի ոգուն: Այն միջնադարյան հավատավոր մարդու հոգու արձագանքն է՝ փրկության ու հույսի աղերսանքն առ Աստված, որում զգալի է Նարեկացու ազդեցությունը:

**ՎԱՆԵ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ** - Գիտական հետաքրքրություններն ընդգրկում են հայ հին և միջնադարյան գրականությունը, բնագրագիտությունը՝ գրաբար բնագրերի փոխադրությամբ, բանագիտությունը, արդի հայ գրականությունը և գրական քննադատությունը: Տպագրվել են հարյուրից ավելի հոդվածներ, 23 գրքեր: Մի քանի աշխատություններ թարգմանվել և տպագրվել են այլ լեզուներով:

<sup>1</sup> Թլկուրանցու այլ աղերսանքների մասին տե՛ս **Եղիազարյան Վ.**, Հովհաննես Թլկուրանցու կյանքը և ստեղծագործությունը, Ե., 2001, էջ 92:

**VANO YEGHIAZARYAN - NEW UNPUBLISHED SONG BY HOVHANNES**

**TLKURANTSI** - This ancient unpublished song has been preserved in three manuscripts- on papers 398 "b" -399 "a" of the manuscript No 2079 in the Matenadaran after M. Mashtots, on papers 187 "a"-187 "b" of the manuscript No.1002 - in the Matenadaran of Vienna Mekhitarist Congregation, as well as on papers 378 "a"-378 "b" of the manuscript No. 1250 in the Mekhitarist Congregation in Venice. The song in the Mashtots and Venice manuscripts is kept next to the songs by Tlkurantsi- entitled "Lament of New Hovhannes", which itself states the fact that the author of the song is Tlkurantsi, though in the end of it his name is mentioned not clearly- as "Hovhannes full of sins", whereas in the manuscript of the Mekhitarist Matenadaran the song ends as "Khev Hovhannes Tlkurantsi", a fact which proves the copyright of the author.

This lament song is typical of sensible-instructional spirit of Tlkurantsi's songs. It is the echo of the spirit of the Middle Ages pious man- a supplication of hope and salvation to God, in which one may feel the impact of Narekatsi.

**Keywords:** *Tlkurantsiology, manuscript No. 1002 of the Vienna Mekhitarist Congregation Matenadaran, unpublished song, supplication.*

**Vano Eghiazaryan, Doctor of Philology, Professor.** - V. Eghiazaryan's scientific interests include Ancient and Medieval Armenian literature, originality with transfer of Grabar texts, philology, Modern Armenian literature and literary criticism. He's published more than 100 research articles and 23 books. Some of his works have been published and translated into different languages. vano.exiazaryan@mail.ru.

**ВАНО ЕГИАЗАРЯН - НОВОЕ НЕИЗДАННОЕ СТИХОТВОРЕНИЕ ОВАНЕСА**

**ТЛКУРАНЦИ** - Это неизданное стихотворение сохранилось в трех рукописях - на листах 398б-399а рукописи № 2079 из Матенадарана имени Маштоца, на листах 187а-187б рукописи № 1002 из Матенадарана Конгрегации Венских Мхитаристов и на листах 378а-378б рукописи № 1250 из книгохранилища Конгрегации Венецианских Мхитаристов. В Маштоцевской и Венецианской рукописях стихотворение расположено рядом со стихами Тлкуранци и имеет заголовок «Новый плач Ованеса», что уже само собой подтверждает авторство Тлкуранци, однако, в конце произведения имя автора употребляется в неопределенной форме: «Ованес полон грехов». Между тем, в рукописи из Матенадарана Венских Мхитаристов стихотворение завершается упоминанием имени «Безумного Ованеса Тлкуранци», что является неопровержимым доказательством принадлежности данного произведения Ованесу Тлкуранци.

Это стихотворение-мольба полностью соответствует духу элегико-назидательных стихотворений Тлкуранци. В нем отражена рефлексия души верующего человека Средневековья, моление Богу о спасении и надежде, в чем ощущается влияние Нарекаци.

**Ключевые слова:** тлкуранцеведение, рукопись № 1002 из Матенадарана Конгрегации Венских Мхитаристов, неизданное стихотворение, мольба.

**ВАНО ЕГИАЗАРЯН - д.филол.н., проф.** Сфера научных интересов: древнеармянская и средневековая армянская литература, текстология – с переводом (изложением) древнеармянских (на грабаре) оригиналов, фольклористика, современная армянская литература и литературная критика. Были опубликованы более ста статей, 23 книги (монографии). Некоторые работы переведены и опубликованы на других языках. [vano.exiazaryan@mail.ru](mailto:vano.exiazaryan@mail.ru).

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ղ. Ալիշան**, Միսուհան, 1885:  
**Ղ. Ալիշան**, Հայապատում, 1901:  
**Ղ. Ալիշան**, Հուշիկը հայրենեաց հայրոց, հտ. Բ, 1870:  
«Անահիտ», 1903, Փարիզ, թիվ 9, թիվ 12:  
«Անահիտ», 1930, Փարիզ, թիվ 5:  
«Անահիտ», Փարիզ, 1931, թիվ 5-6:  
«Արեգ», 1924, Վիեննա, թիվ 8, թիվ 9, թիվ 11, թիվ 12:  
**Վ. Եղիազարյան**, Երկու անտիպ տաղ Հովհաննես Թլկուրանցուց, «Էջմիածին», 1997 Ա:  
**Բ. Կիլեւերեան**, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս, 1939:  
**Կ. Կոստանեանց**, Յովհաննէս Թլկուրանցին եւ իւր տաղերը, Թիֆլիս, 1892:  
**Կ. Կոստանեանց**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ, Ա պրակ, Թիֆլիս, 1892:  
**Կ. Կոստանեանց**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր ու ոտանաւորներ, Գ պրակ, Թիֆլիս, 1896:  
**Կ. Կոստանեանց**, Նոր ժողովածու, Միջնադարեան հայոց տաղեր եւ ոտանաւորներ, Վաղարշապատ, 1903, Դ պրակ:  
**Հովհաննէս Թլկուրանցի**, Տաղեր և գանձեր, աշխատասիրությամբ՝ **Վանո Եղիազարյանի**, Վանածոր, 2004, 184 էջ:  
**Հովհաննէս Թլկուրանցի**, Տաղեր, աշխ. **Էմ. Պիվազյանի**, Ե., 1960, էջ 83:



Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան մատենադարանի, հտ. 2, խմբագրութեամբ՝ **Գեորգ Տեր-Վարդանեսանի**, Ե., 2012:

Ցուցակ հայերեն ձեռագրաց Մխիթարեան մատենադարանին ի Վիեննա, հտ. Բ, կազմեց **Հ. Համազասպ Ոսկեան**, Վիեննա, 1963:

Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հտ. Ե, յօրինեց **Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան**, Վենետիկ, 1996:

**Լ. Միևասեան**, Մի քանի տաղ Յովհաննես Թլկուրանցուց, «Սիոն», 1967, թիվ 9-10, թիվ 11-12:

**Աս. Մնացականյան**, Անտիպ բանաստեղծություններ և վարիանտներ, «Գիտական կյութերի ժողովածու», թիվ 1, 1941:

**Աս. Մնացականյան**, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Ե., 1956:

**Յովհաննես Թլկուրանցի**, Տաղագիրք, աշխ. **Լ. Ծովականի**, Երուսաղեմ, 1958:

**Ղ. Յովնանեան**, Միջնադարեան ազգային տաղաչափութիւն ռամկախառն, Վիեննա, 1911:

**Ե. Շահագիզ**, Պատմական պատկերներ, Թիֆլիս, 1903:

**Ա. Զօպանեան**, Հայ էջեր, Փարիզ, 1912:

**Ա. Զօպանեան Ա.**, Թլկուրանցին ինչպէս որ է, «Հայաստանի կոչնակ», 1929, թիվ 1:

«Սիոն», 1952, թիվ 5:

«Սիոն», 1952, թիվ 10:

«Սիոն», 1952, թիվ 11-12:

«Սիոն», 1953, թիվ 3-4:

«Սիոն», 1955, թիվ 9-10:

«Սիոն», 1956, թիվ 2-3:

«Սիոն», 1956, թիվ 5-6:

**Գ. Սրուանձտեանց**, Մանանայ, 1876:

**Հ. Սուրխաթյան**, Գրական գոհարներ, հտ. Ա, Թիֆլիս, 1922:

**Ա. Տևականց**, Հայերգ, մեղեդիք, տաղք եւ երգք, Թիֆլիս, 1882:

**Յ. Քիւրտեան**, Յովհաննես Թլկուրանցիի տաղերը, «Հայրենիք ամսագիր», 1935, թիվ 8:

**Յ. Քիւրտեան**, Յովհաննես Թլկուրանցիի քանի մը անտիպ եւ հազուադիւտ տաղերը, «Հայրենիք ամսագիր», 1935, թիվ 9:

**Յ. Քիւրտեան**, Յովհաննես Թլկուրանցիի տաղ «Վասն ստեղծման աշխարհի», «Բազմավեպ», 1938, թիվ 6-9:

**Յ. Քիւրտեան**, Միջնադարեան հայ տաղասացներ, «Բազմավեպ», 1939:

DOI: 10.54503/1829-0116-2022.1-5